Ը. ՏԱՐԻ — ՇԱԲԱԹ 12 ՄԱՐՏ 1905 — ԹԻՎ 696

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար տարեկան 15 »
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար տարեկան 3 տլր.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը սոս ջին երեսին համար 40 ս. իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է. երեքեն աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կը լայ։

Վառնայի համար ձեռքէ 10 սանթիմ

ԱՐԱԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ-ԱԶԳԱՅԻՆ· ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

ԿԸՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեանս հասցէին

Редакция на вѣстникъ „Шаржумъ“ Варна

Redaction du journal „Char oum“ (Bulgarie) Yarna

Պուլկարիոյ համար ձեռքէ 15 ՍԱՆԹԻՄ

Արտասահմանի համար ձեռքէ 20 ՍԱՆԹԻՄ

Գրութիւնք չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺՆԵԳԻՆԸ ՊԼՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ»

ԲԱԳՈՒԻ ԱՐԻՒՆԱՀԵՂ ԱՆՔԵՐԸ

—()o()—

Գ.

(Թիֆլիզի մեր ոշխատակցին)

Ամբողջ հինգ օր տեւելուց յետոյ, կոտորածներն ու կողոպուտը դադարեցին Բագուում։ Ի՞նչ է ներկայացնում այժմ այդ եղերական դրամայի վայրը... Այժմ նրա վրայ միայն կարելի է լալ· լալ հազարաւոր անմեղ նահատակների կեանքը, որոնք չընչին բացառութեամբ, բոլորն էլ երիտասարդ ու պատանիներ են։ Լալ անտուն-անտէր մնացած բազմաթիւ որբերին, լալ որդեկորոյս դժբաղդ ծնողներին, լալ այրեցած, անմխիթար կանանց եւ սէրը կորցրած բազմաթիւ օրիորդներին· լալ երեկուայ հարուստ, իսկ այսօրուայ ողորմութեան կարօտին եւ ողբալ մոխրակոյտերը երեկուայ պալատներին.. եւ վերջապէս լալ սրբապղծուած աշխատանքի վայրը, ուր գործուեց անքաւելի յանցանքը... Ո՛հ, միթէ՞ այդ բոլորն արել է երեկուայ խաղաղ աշխատող ժողովուրդը... ո՞վ խմացրեց նրան այդպիսի սարսափելի թոյն... Թող Աստուած դատէ· գուցէ նա իր անսահման ներողամտութեամբ ներելու մի հնար գտնէ ռուս կառավարութեանը, որն իր զզուելի գոյութիւնը պահպանելու համար, խաղաց այդ խայտառակ խաղը...

Խաղկ խայտառակութիւնը կատարեալ է դառնում կառավարական պաշտօնեաների—մարդկութեան այդ սականքների—գարշելի խեղկատակութեամբ։ Հրէշագործ Նակաշիձէն, այդ խայտառակութիւնը խաղալուց յետոյ, այժմ կսմտատում է, թէ պէտք է գանել յանցաւորներին եւ պատժել նրանց· ոստիկանապետը տրդարանում է, տպելով լրագրում նամակ· սակայն խեղդում են այդ նոյն լրագրին չը թոյլ տալով որ նա պատասխանէ այդ արդարացումներին եւ կսմտոցներին։

Այժմ, աւելի քան երբ, յայտնի է դառնում, որ Բագուի արիւնահեղութիւնը ռուս կառավարութեան եռանդուն ջանքերի անմիջական արդիւնք էր· լրագիրները ամեն օր հրատարակում են բազմաթիւ ականատեսների ցուցումները, որոնք միաբան, բազմաթիւ փաստերով նոյնն են ապացուցանում· այդ բոլորը եթէ բաւական չեն թող առաջ գայ ամենից խոշոր փաստը։ Ռուս միապետութիւնը զղում է իր գահի վրայ· նրա իշխանութիւնը խախտուած է երկրի ամէն մասերում· Կովկասն էլ որպէս լայնածաւալ Ռուսաստանի մէկ ծայրը, հանգիստ չէ։ Բանւորական շարժումը ահագին չափեր է ընդունել, բոլոր քաղաքներում· Գուրիայում (Վրաստան) այժմ կատարեալ ապստամբութիւն է տիրում· կանոնաւոր պատերազմ է տեղացիների եւ ռուս կառավարութեան մէջ· զորքի են դրել ե՛ւ թնդանօթներ։ Այն միտքը, որ Կովկասի ազգութիւնների համերաշխութիւնը, երկրի մէջ կառաջացնէ անյաղթելի ապստամբութիւն եւ ընդմիշտ կը զրկէ Ռուսաստանին Կովկասի տիրապետութիւնից, հանգիստ չէ տալիս կառավարութեանը եւ ահա նա, որպէսզի ազատուի այդ վտանգից, ձգտում է արիւնի անհաշտ թշնամութիւն առաջ բերել այդ ազգութիւնների մէջ եւ որի արդիւնքն էր Բագուի դէպքը։ Այդպէսով կառավարութիւնը հասնում է իր այդ նպատակին, զուգնթացաբար առաջ տանելով եւ մի ուրիշ աւելի կարեւոր նպատակ, այն է փոխել ժողովրդական շարժման ուղղութիւնը։ Դրանով նա տալիս է ժողովրդի ձեռքը մի զբաղմունք, որով նա զբաղեցնելով չի հակում սոցիալիզմին եւ առաջ տանում հակակառավարչական շարժումը· տուժում է սոցիալական շարժումը՝ յօգուտ միապետութեան շահերի եւ ազգայնական թշնամութեան· այդ քաղաքականութեան հետեւանքն էին Քիշնեւի, Դոմբլի եւ վերջին օրերս Յեկատերինոսլաւի հրէական ջարդերը։

Այդ նպատակներով որոգայթներ են լարուած մեր երկրի ամեն մասերում· տեսակ-տեսակ տարաձայնութիւններ միշտ յուզում են մեր երկրի ժողովուրդը։ Ոստիկանութեան գործակալները լուր են տարածում այժմ, իբրեւ թէ հայերը միացած վրացիներին, պիտի կոտորեն բոլոր ռուսներին եւ յորդորում են վերջիններին զգոյշ եւ պատրաստ լինել։ Հեռագիր կար, որ Բագուից վերջին չորս օրուայ ընթացքում մեկնել են 1000ից աւել ռուս բանւորներ, վախենալով կոտորուելուց։ Զը նայած մեր հասարակութեան գիտակից մասի եռանդուն ջանքերին պահպանելու համերաշխութիւն ազգերի մէջ եւ ժողովրդի եղբայրական արտայայտութիւններին, այնու ամենայնիւ մեր սիրտը չի հանգստանում· մենք սրտի դողով սպասում ենք, որ ծագած հրդեհը կը տարածուէ մեր երկրի ամէն մասերում։ Հեռագիրը Երեւանից լուր բերեց, որ այնտեղ կիրակի-փետրվարի 20ին մի խումբ զինուած թուրքեր, օգտուելով երկու թուրքերի մասնաւոր վէճի հանած աղմուկից, յանկարծ յարձակեցին հայերի վրայ, որի հետեւանքն եղաւ հայերից 3 սպանուածներ, 7 վիրաւորներ իսկ թուրքերից 1 սպանուած եւ մի քանի վիրաւորներ· հետեւեալ օրը նոյնը կրկնուում է· այս անգամ թուրքերից սպանուում եւ վիրաւորուում են շատեր· հայերը տիրում են փողոցներին, առանց կարգը խանգարելու։ Նրանք սպանում են միայն յարձակում գործող թուրքերին։ Հաստատ հաւատացած ենք, որ եթէ Երեւանում հայերը պատրաստուած դիմադրութիւն ցոյց չը տային, Բագուի հայերի օրին կը հասնէին։ Մի սպայ որ դուրս է եկել կարգ պահպանելու համար, գնդակահարել է մի հայի։ Ակնյայտնի իրողութիւն է, որ թուրք ժողովուրդը երբէք յարձակելու տրամադրութիւն չունի· այդ փոքրիկ դէպքերը, որոնք հասարակութեան մէջ բռնկուելու տրամադրութիւն են առաջացնում պարզապէս կառավարութեան որոգայթներ են· յարձակման նշան տուող այդ խմբերը ոստիկանութեան գործակալներ եւ նրանցից վարձուած սրիկաներ են։ Սպասենք...

Հիմա, երբ Բագուում կոտորածը դադարել է, մի հարց՝ ի՞նչպէս ոչխարային միամտութիւն ունէր մեր ժողովուրդը, որ օրեր առաջ գգում էր արեան հոտը և չէր պատրաստուում ինքնապաշտպանութեան համար։ Չի կարելի չմեղադրել տեղական մեր կոմիտէին, որ այնքան արիւն չի եղել՝ տեսնելու իր շուրջը կատարուածը և ըստ հարկին զգուշացնելու հասարակութիւնը, նաեւ միջոցներ ձեռք առնել գալիք աղէտների առաջն առնելու համար։ Կատարուածը կատարուեց արդէն։ Գէթ օգտուենք մեր անցեալ սխալից։ Մի այն զինուած և արիւն լինելը կը փրկէ մեզ Բագուի նման ոչխարային կոտորած տալուց։ Փողոցային մի սինլքոր ամբոխի առջեւից, որի ձեռքը պատահարար զէնք էր ընկել, հայ ժողովուրդը փախչում էր կատի պէս կոտրուում էր ոչխարի պէս։ Միթէ՞ ամօթից գետինն անցնելու չէ։ Մի քանի սրատներ էին հարկաւոր միայն, ամեն տեղ այդ ամբոխը տերեւի նման ցրիւ տալու և այդ չէր անում Բագուեցի հայը։ Նա փախչում էր պահւում էր տակառներում, թողնելով որ այդ անեն մեր յեղափոխական զինուորները· մեր յեղափոխականը այդ կանէր, բայց դրանից առաջ պէտք է անէր ինքը Բագուեցի հայը։ Ճիշդ է Բագուում աւելի թուրքեր սպանուեցին, քան հայեր, բայց այդ պատիւը Բագուեցի հային չէ, այլ մեր յեղափոխական զինուորին։ Ժամանակ է որ մեր ժողովուրդը մոռանայ փախչելու սովորութիւնը։

Այլեւս յաւիտենական անէծքի վայր է Բագուն... Եւ փախչում են նրանից իր հարազատ բնակիչները. փախչում են իբրեւ մի անէծքի բոյնից· ապահով դասի հետ փախչում է եւ աշխատող, բանւոր երիտասարդութիւնը· փախչում է նա, ով փոքր ինչ հնարաւորութիւն է ունենում· Մի քանի օրուայ ընթացքում դուրս են եկել Բագուից 10 հազարից աւելի անձինք· դա մի սոսկալի սպառնանք է Բագուի պէս արդիւնաբերական կետրոնին· Բագուն Կովկասի անտեսական սիրտն է համարուում· ուրեմն նրա անկումով ընկնում է ամբողջ Կովկասի տնտեսութիւնը։ Արդիւնաբերութիւնը շատ գործարաններում կանգ է առել· Բալախանում այլեւս աշխատող բազուկ չկայ· և շուտ չի վերականգնուի հասարակական կարգն ու հանգստութիւնը Բագուում· այնտեղ կեանքը շուտ չի մտնի իր բնական ֆազիսի մէջ· իսկ ինչ միջոցներ է ձեռք առնում կառավարութիւնը... Կովկասը յայտարարուեց փոխարքայութիւն· առաջին փոխարքան նշանակուեց կոմս Վարանցով-Դաշկով· Բագուում հաստատուեց Գեներալ Նահանգապետութիւն և այդ պաշտօնը յանձնեցին իշխան Ամիլախվարիին։ Բագուն իր ամբողջ նահանգներով յայտարարուեց պատերազմական դրութեան մէջ, մի բան, որին մտքի չափ անգամ պէտք չունէր Բագուն։ Բայց երեւի պատերազմական դրութիւն կը յայտարարուի ամբողջ Կովկասում։ Արդէն Վլադիկովկասի ամբողջ երկաթուղային գծի վրայ պատերազմական դրութիւն է տիրում· Խեղճ մեր Կովկաս, տես ինչ դայրեն-ինների կամայականութեան է յանձնուած քո ճակատագիրը։ Ափսո՛ս հազար ափսո՛ս... Մեր այս գեղեցիկ երկիրը դարձրել են ոճիրների և անէծքի վայր և թոյլ չեն տալիս զէթ հանգիստ ապրել նրա գեղեցկութեան մէջ· ռուս կառավարութիւնը, եթէ իրօք նա կառավարութիւն է և ոչ մի քանի չինովնիկ մինիստրների, կատի՝ ահը վրաներից ընկած մկների անվերջ չահատակութիւններ թող մրտածէ, թէ ինչ է անում ինքը, թէ այդ զզուելի ռէժիմով ինչքան մոտեցնում է իր անկումը։

Բագուն կրեց այդ ծանր հարուածը կուլ տուեց իր գլխին խաղացուած այդ խայտառակ օյինը։ Ամենագլխաւոր հարցը՝ ինչ կանէ նա այժմ, այ-

ժամ երբ նրա առաջ դրուած է մի ծանր պարտականութիւն, որից պատուով դուրս գալը պարտաւորիչ է. քաջութիւն կունենա՞յ նա հրապարակ քաշել յայտնի յանցաւորին, թէ վախկոտութեամբ կը թողնէ, որ այդ հրակայ ոճիր գործողը, իր աչքի առաջ ամենայն լրբութեամբ, անպատիժ շարունակէ իր զզուելի գործունէութիւնը.. Ռուսաստանի պէս մի բարբարոս պետութեան մէջ, ուր օրէնքն ու արդարութիւնը ամեն րոպէ լիրբ անպատկառութեամբ ոտքի տակ են տալիս, ու կոպիտ խաւար ոյժը տիրում է իր ամբողջ փառահեղութեամբ անշուշտ օրինական ճանապարհով անհնարին կը լինէր երեւան հանել և պատժել եղեռնագործներին. դա կը կը նշանակէր կառավարութեանը հարկադրել, որ ինքն իրան պատժէ. Բայց դրանով Բագուի հայութիւնը չը պէտք է արդարանայ. նա ինքը պէտք է լինի իր դատաւորը և իր ձեռքով արժանի պատիժը տայ յանցաւորներին. իսկ թէ դա ինչպէ՞ս, դրա համար միջոցներ շատ կան. ուր պետութիւնն ինքը չի պաշտպանում արդարութիւնը, այնտեղ անհրաժեշտօրէն պիտի գործադրուի Լինչի օրէնքը...

Պէտք էր քննութիւն կատարուածի մասին և դրա համար առաջինը կանխէց ինքը, կառավարութիւնը. բայց ինչպէս, կազմուեց մի յանձնաժողով Գեներալ Ամիլախվարիի նախագահութեամբ, հէնց առաջին օրից դա ցոյց տուեց իր գոյնը, այն ինչ որ սպասւում էր... Յիշեցէք Քիշնէվի հրէական ջարդերի համար նշանակուած քննութիւնը... յանձնաժողովի մէջ մեծ տեղ են բռնում կառավարական չինովնիկ դատաւորները և ուրիշ վարչականներ. ինքը նախագահ իշխան Ամիլախվարին, զզուելի կամայականութեամբ ճնշում է գործ դնում յանձնաժողովի մի քանի անդամների վրայ, որոնք ճիգեր են գործ դնում արդարութիւնն ու յանձանքը երեւան հանելու. արդէն Բագուի ամբողջ եղերական դրաման բնորոշում են «մի շարք սպանութիւններ» խօսքով. յայտարարում են որ կոտորածի «ընդհանուր պատճառների» մասին խօսք չպէտք է լինի. դրա պատճառները պէտք է փնտռել տեղական նեղ շրջաններում և հէնց առաջին նիստում մեղադրանքներ են բացում... Ո՞ւմ դէմ... հայկական կոմիտէի... Արդեօք այդ բոլորից յետոյ հնարաւո՞ր է սառնասրտութիւն պահպանել. դրա համար հարկաւոր է որ մեր սրտերը սառուցից կերտուած լինին այդ նիստում հայոց կողմը պաշտպանողներն են պ. Ղուկասեան, Թաղիանոսեան, Վեզիրով (Թուրք և Վաչեան։ Մամուլի ներկայացուցիչները հրաժարուել են ներկայ գտնուիլ, շատ լաւ գիտնալով թէ ինչ է լինելու այդ ժողովը։ Ներկայ է միայն «Կավկազ» պաշտօնական թերթի չովինիզմով ներշնչուած թղթակիցը, որի հաղորդագրութիւններն են արտատպվում լրագիրներում։ պ. Վաչեան յայտարարում է որ հայ յեղափոխական կոմիտէի դէվիզն է՝ հընարաւորութիւն տալ թուրքահայերին մարդավարի ապրիլ. նա ոչինչ չունի ռուս կառավարութեան դէմ, թէ նա ազգերի եղբայրութեան պաշտպան է. պատասխանում են; որ հայկական կոմիտէտը, ոչ թէ եղբայրասէր, այլ եղբայրասպան կոմիտէտ է և ասում են, որ խմբական կոտորածներ առաջացնելու պատճառներից մէկն էլ այդ կոմիտէի անդամներից մէկի, որ սպաննուել էր թուրքի ձեռքով, դէմոնստրատիվ, փառաւոր թաղումն էր. Ընթերցող, եթէ դուք մօտաւոր մի գաղափար ունէք Բագուի այդ անցքի մասին, հիմա երեւակայեցէք, թէ անարդարութիւնը ինչ հրէշաւորութեան է հասցրուած ռուսական դժողքում. Սակայն ինչու երկարացնել, այդ քննութիւնների մասին առանձին յօդուած կը գրեմ, եթէ կարողացայ գրել... Այժմ սպասենք տեսնել թէ ո՞վ կը նստի մեղադրեալի նստարանի վրայ. Բագուի հայութիւնը, որ կրեց այդ ողբալի դրամագօմէդիան, իր ամբողջ արհաւիրքներով, թէ Բագուի ադմինիստրացիան, որ այդ յանցագործութեան միակ հեղինակն է...

Խե՛ղճ հայ, խե՛ղճ հայեր...

ՖԱԼԱԴ

Թիֆլիս, 21 փետր.

ԱՄՖԻՏԵԱՏՐՈՎ

ՎԻԿՏՕՐԻԱ ՊԱՎԼՕՎՆԱ

(Տօնախմբութիւն)

—)o(—

(Գրագիտի յիշողութիւններից։ Ամրան արկածներ բաւական տարօրինակ հանգամանքների մէջ)

—)o(—

(Թարգմ. ռուսերէնից)

15

Դ.

(Շար. 690 թիւն)

—Միթէ՞, ծիծաղեց Վիկտորիա Պավլովնան։

—Թերեւս միայն այն պարագային՝ երբ դուք ամուսնանաք, առարկեց իշխանը։

—Թու, լեզուդ չորնայ. Միխայիլ Ավգուստովիչը ձեռքը թափահարեց.

—Ինչու ոչ, զսպված եւ մռայլօրէն ասեց Բուրուլը։

—Ինչպէս թէ ինչու, կիսալուրջ կերպով բացականչեց Զվերինցեւը, իսկ մենք թշւառականներս ո՞ւր պիտի կորչենք. չէ որ մենք հիմա ազատ մուտք ունենք այստեղ. միայն նրա համար որ Վիկտորիա Պավլովնան ազատ կօղակ է... իսկ այն ատեն, ինչ ամուսին էլ որ ունենայ, նոյն իսկ հորթի պէս համաձայնող մէկը, այնու ամենայնիւ ուրիշին պէտք է պատկանի։ Շատ էլ չենք կարողանայ այնպէս նրա մօտ հաւաքվել, սրտակցօրէն։

Ճիշտ եմ ասում թէ ո՞չ։

—Այդպէս է, ծիծաղեց Վիկտորիա Պավլովնան։

—Ամուսինը կը հարցնէ, դուք պարոն, իսկապէս ի՞նչ էք ուզում իմ կնոջից։— խօսել եմ ուզում.— շատ հաճելի է. Վիկտորիա սիրելի Միխայիլ Ավգուստովիչը քեզ հետ խօսելու է եկել. դէ, խօսեցէք, ես էլ կը լսեմ։—Բայց ես այնպէս սրտաբաց խօսակցութիւն եմ ուզում.—խնդրեմ, այդ պարագային ես ինչու ներկայ չը պէտք է լինեմ. այդ ինչ մտերմութիւն է. կարծեմ ես էրիկ եմ եւ կնոջս ո՞ւ եւ էլ այր մարդի հետ ունեցած խօսակցութեան մէջ աւելորդ լինել չեմ կարող։

—Բայց եթէ ես սրտումս այնպիսի բաներ ունեմ, որ բացի Վիկտորիա Պավլովնայից ուրիշին չեմ կարող ասել։— Տարօրինակ գաղտնիքներ, շատ տարօրինակ, եթէ չասենք թէ անպատուաբեր իմ ամուսնական արժանապատուութեանս համար.—Բայց եթէ միայն Վիկտորիա Պավլովնան կարող է մխիթարել ինձ զգացումներիս մէջ.— Թոյլ տուէք պարոն, Վիկտորիա Պավլովնան այն էլ առանձին միայն իմ զգացումներս կարող է մխիթարել բացառապէս այդ իմ իրաւունքն է, թէ մարդկային եւ թէ աստուածային օրինաց համաձայն, որովհետեւ ես ամուսինն եմ, իսկ դուք երբ ձեր զգացումների մխիթարութեան պէտքն էք զգում, դիմեցէք ձեր յարգելի կնոջը, իսկ մեզ, խնդրեմ ձեր աւելորդ այցելութիւններով երես չը տաք։ Ճիշտ եմ ասում թէ ո՞չ։

—Այդպէս է, հաստատեց Վիկտորիա Պավլովնան. եւ Զվերինցեւը շարունակեց.

—Այդպէս եթէ դուք հանդիպէք ինձպէս ծերացած ամուսնու։ Իսկ եթէ Բուրուլի հետ ամուսնանաք...

—Չէ կարի՞լի առանց օրինակների անհամբերութեամբ նկատեց Բուրուլը։ Իսկ Վիկտորիա Պավլովնան ազատակեց.

—Չէ, չէ, այդ հետաքրքիր է. էհ՝ Միխայիլ Ավգուստովիչ, ուրեմն ինչ կը լինէր Բուրուլի հետ։

—Նա ձեզ լացի կը վերածէր։

—Ինչ...

Այդ տեսակ բայէլ գոյութիւն չունի. մրմրթաց Բուրուլը։

—Բայը կարելի է որ գոյութիւն չունի, բայց լացի կանկեր աշխարհում որքա՞ն կուզես։ Եւ նրանք բա-

---

ԺՕՐԺ ԳԼԷՄԱՆՍՕ

ԵՒ

ՃԱԲՈՆԻԱ

Հռչակաւոր հռետոր և քաղաքական այս գործիչը «Լ'օրօր» թերթին մէջ յօդուած մը գրած է Ճալոնիայի մասին, որուն մէջ հետեւեալը կսէ.—«Ասիական ազգ մը իբրեւ առաջնակարգ ուժ պիտի պիտի մտնայ քաղաքակիրթ կոչուած պետութեանց խմբի մէջ։ Ատոր հետեւանքները անթեւելի են. Ճաբ.նի երեւումովը ուժերու հաւասարակշռութեան վերաբերեալ առաջ բերած փոփոխութիւնները կստեղծեն բոլորովին նոր կացութիւն մը և մենք պարտաւոր ենք զայն հաշուի առնել։

Այս առաջինն է։

Ատկէ վերջը չը պիտի բացատրենք որ երկւորեակ նիզակցութեան պատերազմական նշանակութիւնը բոլորովին կը նսեմանայ ի Ղնաս Ֆրանսայի։ Մեր արտաքին գործոց նախարար Տէլ կասէ ինչքան կուզէ կրնայ ըսել թէ այժմս ամէն ժամանակէ աւելի անհրաժեշտ է Ռուսիոյ դաշնակցութիւնը. ես իմ կողմէս չեմ ուզեր անոր ոչնչացումը, բայց չենք կրնար չը նկատել որ եթէ վազը Ֆրանսան պէտքը ունենայ այդ դաշնակցութեան. մեր դաշնակիցը մեզի համար բան մը չը պիտի կրնայ ընել։

Երկեակ դաշնակցութիւնը պիտի շարունակէ գոյութիւն ունենալ, ի հարկէ, բայց միայն թուղթի վրայ։ Իրապէս ան պիտի մընայ միայն յիշատակ մը ոչ մրատեսակ քաղցր երկու կողմին համար ալ։

Այս նոր կացութեան հանդէպ Ֆրանսան նոր ձեւերով պիտի գործէ, պիտի ըսէի ես, եթէ չը վախնայի թէ կը խորտակեմ մեր մեծ դիւանագէտներու հանգըստութիւնը որոնց կոյր լաւատեսութիւնը այնքան փորձութիւններու հանդիպեցաւ Մանչուրիոյ մէջ։

ՎՏԱՆԳ ԹԷ ՑՆՈՐՔ

II

Մեր նախորդ յօդուածին մէջ ցոյց տուինք պատճառները, որով ցէնզ պահանջող օրէնքը մինչեւ ցարդ անգործադրելի մնացած է։

Երբ մենք հարցը կը դնենք իր բնական հողին վրայ, այն ատեն խնդիրը կը պարզուի։ Անոր իսկական ու ճշմարիտ լուծումը գտնելու համար, բաւական է միայն վերաքննութիւն մը ընել յիշեալ օրէնքին և մասնաւոր վարժարաններու պայմաններուն միջեւ գտնուած յարաբերութեանց վրայ։ Եթէ այս յարաբերութիւնները մնացած են անփոփոխ՝ նոյն վիճակի մէջ՝ ինչպէս 10 տարի առաջ, այն ատեն վտանգը գոյութիւն չունի ոչ ներկային, ոչ ալ մօտակայ ապագային մէջ։

Եւ յիրաւի ի՞նչ էին օրէնքին չը գործադրուելուն պատճառները մինչեւ ցարդ, եթէ ոչ օրէնքէն կանխատեսուած ցէնզը գոհացնող ուսուցիչներու պակասութիւնը։

Եւ այսօր՝ ճիշդ տասը տարի վերջ ունի՞նք բաւական թուով ցէնզը գոհացնող ուսուցիչներ։ Ունի՞ն նաեւ տաճիկները և յոյները։ Ոչ։

Եթէ այս խստութիւնները օրէնքին դրուած օրէնի վերագործադրուէին, թերեւս մենք աւելի պատրաստուած կըլլայինք։ Մինչեւ երեք տարի առաջ օրէնքը մնացած էր մեռեալ տառ։

Ասիկայ նկատուեցաւ կրթական իշխանութիւններէ և անոնք ըսկըսան խստութիւններ բանեցընել ճիշդ 7 տարի վերջ, բռնի ստեղծելու համար վերջապէս այն պայմանները, որոնք կարելի պիտի ընեն օր մը օրէնքին լիակատար գործադրումը։ Ահա՛ ուրեմն յիշեալ խստութիւններու ու սպառնալիքներու իսկական գաղտնիքը։ Անոնք լոկ խստութիւններ են առայժմ, գուցէ իրականալի ապագայի մէջ՝ եթէ մենք մենք մեր յատկանշական անտարբերութեան մէջ։

Բայց մենք պէտք է ի նկատի ունենանք նաեւ Պուլկարիոյ քաղաքական վիճակը, որովհետեւ այն էր օրէնքին գործադրման ամենագօրաւոր արգելքը։

Պուլկարիոյ այսօրուան քաղաքական վիճակը ոչ միայն նպաստաւոր չէ այս տեսակ ձեռնարկի մը համար, այլ ընդհակառակը։

Տաճկական վարժարանները միշտ եղած են այս օրէնքին գործադրման միակ արգելքը։ Եթէ միայն յոյները և մենք ըլլայինք գործը դիւրին էր։

1894ին Պուլկարիոյ քաղաքական վիճակը այսօրուընէ աւելի գօրաւոր էր և հետեւաբար աւելի նպաստաւոր օրէնքին գործադրման համար։

Այս թուականէն առաջ Պուլկարիան ունէր պատերազմական յաղթանակ մը, որ անոր քաղաքական վարկը բարձրացուց։ Ասոր յաջորդեց ուրիշ յաղթանակ մը՝ շատ աւելի կարեւոր առաջինէն՝—հարաւային և հիւսիսային Պուլկարիոյ միութիւնը—որ եկաւ ամենապայծառ կերպով չախչախելու Սուլթանի անուանական գերիշխանութիւնը Պուլկարիոյ վրայ։ Այս թուականէն վերջ Պուլկարիան ապրեցաւ ներքին սոսկալի տագնապներ, բայց ճիշդ այս ատեններն էր, որ նախարար Օթամպօլոֆ կը հեռագրեր խնդրոյ մը նկատմամբ Սուլթանին՝

«Եթէ սինչեւ 24 ժամ գոհացում չստանամ, մեր բանակը դիմաւորեցէք սահմանագլուխը»։

Եւ այս նախարարին օրովն էր որ ընդունուեցաւ դպրոցական յիշեալ օրէնքը։ Բայց այսպէս հեռագիր զարնելու յանդգնութիւնը ունեցող նախարարն իսկ, չը կրցաւ օրէնքը գործադրել։ Եւ ինչո՞ւ։ Օրէնքին գործադրուելէն առաջ գալիք ներքին դժգոհութիւնները և կամ տաճիկ կառավարութեան արդէն չեղոքացած ճնշումը չէր։ որ կարգիլէր։ Այլ պարզապէս պուլկարական դպրոցական շահերը Մակեդոնիոյ մէջ և այս դեռ այն ատեն, երբ Մակեդոնիան խաղաղ էր և չէր ապրած այն արիւնահեղ դէպքերը։ որոնք սկսան 1896ին և հասան իրենց գագաթնակէտին 1903ին։

Այսօր այս դէպքերէն վերջ՝ ո՞րքան աւելի զգալի են պուլկարական դպրոցական շահերը Մակեդոնիոյ մէջ, երբ մանաւանդ հոն պուլկարներուն կը սպառնայ ձուլումի անանկ վտանգ մը։ ուրուն նմանը այստեղ մեզմէ շատ հեռու է։

Ժամանակի և տեղի պակասութիւնը ինձ չի ներեր, որ այս մասին օրինակներ մէջ բերեմ, պիտի գոհանամ միայն Ֆիրմիլեանի խնդիրը յիշեցնելով։

Եւ երբ այս բոլորը ի նկատի ունենանք այն ատեն պիտի տեսնենք թէ՝ յիրաւի օրէնքին գործադրման պայմանները շատ աւելի անպատաստ են այսօր, քան 1894ին,

Երբ ցէնդով վարժապետներ կը պակսին, Պուլկարական կառավարութիւնը պիտի ելնէ գարձեալ օրէնքը գործադրել։ Առանկ քայլ մը՝ ինչպէս վերը ցոյց տուինք՝ անխոհեմութիւն պիտի ըլլար իր քաղաքական շահերուն տեսակէտով։

Բայց թերեւս առարկուի թէ՝ եթէ տաճկական վարժարաններու համար անկարելի է այդ օրէնքը գործադրել։ մեր վարժարաններուն համար ի՞նչ անկարելիութիւն կայ։

Մենք ընդհանուր կերպով ցոյց տուինք գործադրման անկարելիութիւնը ներկային և մօտակայ ապագային համար։ յաջորդով պիտի մասնաւորենք ինդիրը միայն մեր վարժարաններու նկատմամբ։

Ս. ՊԱՋԱՐՕՎ

11 մարտ 1905
Վառնա

ՏՕՊՐԻՋԻ ՀԱՅԿԱԿ-ԸՆԹԵՐՑԱՐԱՆԸ

—○—

(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)

Սրճարանը — մենք կը կարծենք թէ, կամքէ ասկ-վս պատճառներով միայն հաստատուած ըլլայ սոյն այն սրահին մէջ, ուր և է ընթերցարանը։ Մանաւանդ մենք աւելի բան մը պիտի ըսենք այդ մասին։ Մեր երկրորդ կարծիքը սա է թէ, Տօպրիչի պէս քաղաքի մը մէջ, ուր անգրագէտ կամ այլ ասած, մայրենի լեզուի անգէտ դասակարգը ստուար մեծամասնութիւնը կը կազմէ, սրճարան-ընթերցարանը միայն կարող է իր տարրական օգուտները մատակարարել հասարակութեան, և փոխադարձաբար քաղել անկէ։ Եթէ ոչ լոկ ընթերցարան մը դատապարտուած պիտի ըլլար։ շաբաթայ մէջ վեց օր միայնակ, սուսիկ բուսիկ կենալու։

Սակայն վերջապէս, քննադատ պարոններու նուազ ինչ իրաւունք տալով, պէտք է խոստովանինք թէ, սրճարանը՝ մասնաւորապէս ընթերցարան յաճախող պարոններուն մէկէ աւելի տհաճութիւններու առիթ կրլայ։— Ամէն պարագաներու և պայմաններու ներքեւ, ընթերցարանը սրճարանէն պէտք էր գէթ միջնորմով մը բաժնել։ բայց, ընթերցարանի առժամեայ սրահին ոչ ընդարձակ ըլլալը ի նկատ առնելով, կը սիրենք յուսալ թէ գոնէ ժամանակաւորապէս պիտի շարունակուի ընթերցարանի այս վիճակը։ մինչեւ որ վարձուի մի այլ յարմարաւոր տեղ։

Քիչ վերեւ մոռցանք ըսել թէ, ընթերցարանը սրճարանէն բաժնուելու պարագային իսկ։ կարող է իր փոխադարձ օգուտը տալ անգրագէտ հայ հասարակութեան։ միայն անհրաժեշտ է մեր վերեւ ակնարկած գրութիւնը գործածել։ այսինքն երկու մասերը պէտք է իրարմէ միայն միջնորմով մը բաժնել։

Խօսելով մեր ներկայ ընթերցարանի վրայ։ մտերմօրէն պիտի խնդրէինք ընթերցարանի Պատ. Վարչութենէն որ առաւելապէս մաքրութիւնը անհրաժեշտ պէտք մը դարձնեն իրենց տրամադրութեան ներքեւ գտնուող այդ սրահին մէջ։ Գրեթէ միշտ ծըխախոտի դիւրաշաղ մոխիրներ, ինչպէս նաեւ փոշի։ կարելի է նշմարել ընթերցարանի ամենաթանկ գոյքը մեծ սեղանին շորս ծակեր ունեցող... ծածկոցին վրայ։

Ասի եթէ ոչ չափազանց ամօթ մը, գէթ բաւական պատիւ մը չի բերեր կարծեմ, ո՛չ ընթերցարանին, այլ՝ իրենց...

Քանի մը տող եւս աւելցնելով, կը վերջացնենք մեր այս անգամեան գրութիւնը։

Ընթերցարանի ծրագրին երկրորդ մասը—այն որ քիչ մը փոփոխած է—իր ակներեւ թերութիւնները ունի։ զանոնց՝ ըստ (չը գիտեմ քանի երրորդ յօդուածի) պէտք է փոփոխութեան ենթարկել։

Թերութիւնները հետեւեալներն են։

Ծրագրի ստորեւ, խոշոր տառերով ծանօթագրուած, ընթերցարանի մէջ բացի հայերէնէ այլ լեզուով խօսակցելու արգիլուած ըլլալը։

Երկրորդ՝ «լուութեան» բացարձակ պահպանումը ընթերցարանի մէջ։

Ուրեմն՝ երբ այս երկու կարեւոր կէտերու պահանջին գոհացում չէ կարելի սպասել սրճարան ընթերցարանէ մը, պէտք է անյապաղ ստորագծել յիշեալ երկու յօդուածները, եթէ վարչութիւնը չուզեր անոնց անփոփոխ մնալովը ծաղրելի գառնալ...

ԿԱԿԱԶՈՒՆԻ

Տօպրիչ 1905

Ց. Գ — Նորութիւն մը !, ամսոյս

լորն էլ նախանձոտ, տիրապետել սիրողներ են։ գերի պահողներ, սատանան տանի դրանց։ սղոցներ, բայց ոչ մարդիկ։

—Ուրեմն ձեր կարծիքով, ինչպէս հիմա պատկերացրիք, ես Վիկտորիա Պավլօվնային ապարանքի մէջ կը գոցեմ եւ նախանձով կը մաշեցնեմ։

—Ոչ, այդպէս չէ։ ընդհակառակ դուք նրան լիակատար ազատութիւն կը տաք եւ ամբողջ աշխարհի առջեւ կը պարծենայիք որ ոչնչով չէք ճնշում... բայց վերջը մի քանի տեսարաններ եւ դրամաներ...

—Որտեղից տեսարաններ եւ դրամներ... եթէ ես, ըստ ձեր կարծիքին պէտք է ցուցադրվեմ որ իմ կամքս առանձին է, կնոջս առանձին։

—Բայց չէ որ ձեզ ցոյց պէտք է տալ թէ կնոջդ, թէ ամբողջ աշխարհի, որ այդ վեհսրտութիւնը ձեզ աժան չէ նստում...որպէսզի քարասիրտ կինը տեսնէ թէ դուք ինչպէս էք տանջվում, ձեր ափրիկեան նկարագիրը նրա սիրոյ համար խորտակում. կարելի է որ անձնասպան լինելու թեթեւ փորձ էլ անէք...

—Միխայէլ Ավդուստովիչ, շատ էք թոյլ տալիս ձեզ. բոլորովին բարկացած, ասեց Բուրուն։

—Ես. բարեկամ՝, Վիկտորիա Պավլօվնայի թոյլատրութեամբ, եթէ ձեզ հաճելի չէ, կը լռեմ։

—Բուրուն, չը՞կուզել։ հրամայեց Վիկտորիան։ պակը իրաւունք ունիդուք ինձ հետ կը քալէիք թբթուած դէմքով այնքան, մինչեւ որ մի ամսից յետոյ կամ եւ կը փախչէի, կամ թէ չէ ինձ կը յուզէիք այնքան որ ես կասէի, բարեկամ, երկուսով փակվենք, ամբողջ կեանքով, իրարու աչքերի մէջ նայենք, հալենք, կամաց կամաց վառվենք, թքելով ամբողջ մարդկութեան վրա՝։ Երեխան ինչով չի զարհանայ, միայն թող չը լայ։

—Զափեցէք իշխանին, տխրած ասեց Բուրուն։

—Էհ, ինչ է իշխանը, շատ լաւ մարդ, ասպետ եւ դժէնտէլմէն։

—Խնայեցէք, Վիկտորիա Պավլովնա, առարկեց իշխանը։

—Եւ-եթէ նրա հետ էլ ամուսնանամ, շարունակեց Վիկտորիան, իշխանը կը մնայ այդպէս ասպետ եւ վեհսիրտ ամուսնու վիճակում։ Բայց գիտէք այդ դժէնտէլմէնները ինչով են մաշող. միշտ պէտք է ջանայ կնոջը չը վիրաւորել սեփականութեան իրաւունքով, եւ այնքան նուրբ պէտք է վարվի որ կնոջ աչքին չը զարնէ իր վեհանձնութիւնը։ Որովհետեւ կը մտածէ որ կինը կարող է վիրաւորվել այդ վեհանձնութիւնից եւ կընդունի իրր ստորնացնող ներողամտութիւն։ Ու իշխանիկը միշտ պիտի աշխատի ճար գտնել ինձ համոզելու որ իր արածը ազնուութիւն չէ, այլ սովորութիւն, դատարկ բան...

Մութի մէջ լսվեց խմբովին ծիծաղ, իշխանն էլ էր ծիծաղում։

—Ախ, Վիկտորիա Պավլօվնա-Վիկտորիա Պավլօվնա, կրկնում էր նա։

—Իրօք, ես ինձ հետեւեալ պատկերն եմ ներկայացնում. հարսանիքից երկու շաբաթ յետոյ Մեղրի ամիսն է, համբոյրներ, գրկախառնումներ եւայլն, լաւ գործ են, բայց արդէն ինձ ձանձրացրել են։ Ամուսնուս դէմքը սիրուն եւ արտայայտիչ է բայց ես կուզէի մեծ հաճոյքով նայել եւ իմ հին բարեկամներիս դէմքերին։—Ուր է, վաղուց է որ Բուրուն չէ երեւում, յորանջելով ասում եմ ես իշխանին։— Ուզում է՞ք նրան տեսնել. ներեցէք իշխան, ես երբէք չեմ կարողանում երեւակայել որ դուք ձեր կնոջը դու կասէք։ չէ, ես այնպէս խօսքի համար ասացի։ Իշխանը անկատելի կերպով անհետանում է եւ ճաշի կամ նախաճաշի ժամանակ, որտեղից որ է երեւան է գալիս Բուրուն։ Կարելի է ուզում են առանձին խօսել, մտածում է իշխանը. ի հարկէ կարելի է որ այդ իրեն հաճելի չէ։ բայց կոշտ չը լինելու համար արգելք չէ հանդիսանում։

(Շարունակելի)

26ի առաւօտը, ընթերցարանի արեւելեան պատէն, վերցուած տեսանք Ռուսիոյ Զարին և Զարիցային պատկերները, որոնք ամէն հայու անարգական հայեացքները կրնդունէին ամէն օր իրենց վրայ։

Այս բանիս պատճառը, Բազուի մէջ կատարուած վերջին արիւնհեղութիւնները ըլլալու են ըստ մեր ենթադրութեան։

ՀՈՑՆ

ՌՈՒՍ ՎԱՆՔԵՐՈՒ ԲԱՆՏԵՐԸ

Ռուս վանքերը ունին իրենց յատուկ բանտերը, որոց մասին առաջները անկարելի էր բան մը գրել։ Այդ վանքային բանտերուն մէջ կը բանտարկուին ուղղափառութենէ հեռացող կամ անոր դէմ քարոզող ու բողոքող ռուսները։ Այժմ ռուս զանազան աղանդներու լաւ տեղեակ Պուրգվինը փաստացի աշխատութիւն մը հրատարակած է այդ բանտերու մասին, որմէ կը հասկըցուի թէ ռուս կղերականութենէ ետ մնացած չէ ինկվիզիցէային սոսկալի գործածած չարչարանքի միջոցներէն։

Ով որ այդ բանտերուն մէջ ինկած է։ ողջ ողջ թաղուած է։ Պուրգվին գիւղացի մը օրինակ կը բերէ որ 63 տարի մնացած է Սլովիցքի վանքին բանտին մէջ։

Շատ հետաքրքիր է Սուզտալի վանքին բանտարկեալներուն տեսակը և թիւը։

Բանտարկութեան միջին թիւը կը կազմէ քսան հինգ տարի, և որ չափ կը մօտիկնանք մեր ժամանակներուն այնքան շատ բանտարկեալներ կան։ Բանտարկեալներուն մեծ թիւը կրօնականներ են, բայց կան և շատ աշխարհականներ, ի թիւս որոց ժէնէրալ մը, երկու բարոններ, մէկ կոմս։ 16 զինուոր. 51 գիւղացիներ։ Ի թիւս այլոց հռչակաւոր բանաստեղծ Պուշկինն ալ պէտք է վանքային բանտը նետուի եղեր, իր «ազատութեան ուղղափառութեան» համար։ Բայց շնորհիւ շատ ազդեցիկ մարդոց միջամտութեան, այդ փորձանքէն ազատուեր է։

Ներկայիս կառավարական շրջանները կարծես զգացած են թէ մեծ ազանդաւորներու դէմ եղած սարսափելի հալածանքին։ Յունվարի վերջը ցարը քանի մը հոգի այդ թշուառ բանտարկեալներէն ազատ արձակեր է։

ՄՈՍԿՈՒԱՅԻ ՏԻԿԻՆՆԵՐԸ ԵՒ ՀԱՇՏՈՒԹԻՒՆԸ

Ռուս թերթերը հրատարակած են Մոսկուայի տիկնանց հետեւեալ խնդրագիրը ուղղուած ցարուհուն։

«Մենք ռուս կիներս, մայրեր և քոյրեր զինուորներու որոնք՝ արիւն կը թափեն ծայր. արեւելքի մէջ մեր թանկագին հայրենիքի համար, ձեզի կը դիմենք, տիրուհի։ Մենք վստահ ենք թէ դուն ալ մայրական սրտովդ մեզի պէս կզգաս պատերազմի բոլոր սարսափները։ Դու պիտի ըմբռնես որ կիները ջերմ կերպով հաշտութիւն կուզեն։ Ընկերական կեանքի բոլոր հիմքերը խաղտուած են, վտանգ կսպառնայ բարոյական հիմերուն։ Մայրերը որոնք կը դաստիարակեն երիտասարդ սերունդը խորապէս վրշտացած են։ անոնց կեանքը անտանելի կը դառնայ. անոնք գրկուած են իրենց զաւակները ճշմարտութեան հիման վրայ դաստիարակելու կարելիութենէն։ Մեր երիտասարդութիւնը կեանք մտած բոպէին միշտ կը հանդիպի այնպիսի երեւոյթներու որոնք բոլորովին հակադիր են ընտանիքի ներշնչումներուն։ Մայրերու սիրտերը կը մորմոքին անոնք չեն կրնար լռել, որովհետեւ կզգան թէ դեռ շատ զոհեր պիտի իյնան, որով ան ինչ որ պիտի պատահի հիմակ պատահական չէ, այլ հին մեղքերու հետեւանք։ Ցարը դեռ կրնայ Ռուսիան փրկել իր ամենակարող կամքով, եղիր մեր պաշտպանուհին, աղաչէ վեհապետին, որ մտիկ ընէ երկրին ձայնին, մոր խնդրանքին։ Եթէ ան Ռուսիան վարէ մեծութեան ճամբով ռուս կինը կաջակցի երկիրը վերակազմելու գործին, երիտասարդութիւնը, եղբայրները և զաւակները ուղղելով դէպի նոր ճամբայ նոր փայլուն կեանք»։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Ֆրանսական թերթ մը Լօնտոնէն մասնաւոր նամակ մը կը հրատարակէ, որուն մէջ կըսուի թէ ինչո՞ւ Գիւյօմ մը, Սուլթանի պաշտօնական գործակատարը Անգլիոյ մէջ թերթի մը թղթակցի յայտարարած է որ Թուրքիոյ եւ Պուլկարիոյ միջեւ պատերազմը անխուսափելի է. Սուլթանը համոզուած է թէ Պուլկարիա գործնական պատրաստութիւններ կը տեսնայ։

ՌՈՒՍԻԱ

Քրաքովի լեհական թերթ մը կը հաղորդէ որ ռուս նախարարութեան յանձնաժողովը սկզբունքով ընդունած է որ Լեհաստանի միջնակարգ դպրոցներուն մէջ լեհ լեզուն աւանդուի։

«Պերլինէր Թանդբլաթ թերթը կը հաղորդէ որ Ուիթէ. աշխատած է ցարը համոզել հաշտութիւն կնքելու համար, միեւնոյն ատեն պարզաբանած բոլոր այն դժբաղդ հետեւանքները որ պիտի ունենայ պատերազմին շարունակութիւնը, սակայն ցարը համաձայնած չէ։ Ուիթէ այժմ կաշխատի որ նախարարական յանձնաժողովի փոխարէն նախարարական խորհուրդ ստեղծուի որուն ձեռքը անցնի բոլոր գործերուն ղեկը։ ու այնուհետեւ ինք արտասահման պիտի երթայ հոն ապրելու։

— Խարպինէն կը հաղորդեն որ 70000 վիրաւորեալներուն համար միայն 60 վիրաբոյժներ կան։ երկու վիրաբոյժներ աշխատութեան շատութենէն խենթեցեր են։

-- «Էքս տը Բարի»ի Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ այժմ գլխաւոր սպայակոյտի վարչութիւնը ռուսներուն կորուստի թիւը 105 հազարի կը հանէ Մուքտէնի քով։ Զորս ամիսէն յետոյ ռուսները Մանչուրիա պիտի ունենան 600000 զօրք, բաժնուած չորս զօրաբանակներու որոնց երկուսին հրամանատարները պիտի ըլլայ Քուրոքաթքինը, երկուսինը Լինէվիչ։ իսկ ընդհանուր հրամանատար մեծ իշխան Նոքոլա Նիքոլայէվիչը։

ՌՈՒՍ—ՃԱՊՈՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

Բեթերսպուրկէն մարտ 10ին կը հաղորդեն որ, «Նովոյէ Վրէմիա» թերթը Խարպինէն հեռագիր մը ունի որով կը հաղորդեն թէ երբ Քուրոքաթքին նշանակուելով առաջին զօրաբանակի հրամանատար դարձաւ իր պաշտօնը ընդունելու թէ հասարակութիւնը և թէ զօրքերը համակրական մեծ ցոյցեր ըրին։ Քուրոքաթքին չափազանց յուզուելով արտասուեցաւ։

— Մաքտ Ցին Լօնտոնէն կը հեռագրեն որ Թայմզ նախայօդուածով մը կառաջարկէ անգլիական կառավարութեան Ճաբոնի հետ ունեցած դաշնագրութիւնը վերածել պաշտպանողականի և յարձակողականի. որպէսզի պատերազմ բացուած պարագային դաշնակիցները կարենան իրարու օգնել։ և այդպիսի դաշնակցութիւնն է որ վերջնապէս պիտի ապահովէ Մայր. Արեւելքի խաղաղութիւնը։

—Բարիզեան թերթ մը կը հաղորդէ որ ռուս բալթիկեան նաւատորմիղը Մատակասգարի ջուրերէն հեռանալով պիտի ուղեւորուի դէպի Զանզեբար կղզիները ու այնտեղ տեղաւորուելով պիտի թափառի ովկիանոսին մէջ։ Ճաբոնի հաղորդակցութիւնը Եւրոպայի և Ամերիկայի հետ արգիլելու համար։

—Նոյն թերթին կը հաղորդեն որ զօրավար Լինէվիչի նոր հասած զօրքերը առաջիններէն աւելի աղէկ են։ ռուս զօրքը կանոնաւոր կը նահանջէ դէպի Խարպին։

—Քուրոքաթքինի առաջին զօրաբանակի հրամանատարութեան պաշտօն ընդունիլը իրեն նախկին ստորադասեալին իշխանութեան տակ, մեծ համակրութիւն ստեղծեր է ամբողջ ռուս ժողովրդին մէջ։ Կսեն որ Քուրոքաթքին այնչափ փակած էր իր գործին որ պատրաստ էր իբր հասարակ զինուոր մնալ բանակին մէջ։

ԵՒՐՈՊԱՑԻ ՀԱՅ ՈՒՍԱՆ. ՄԻՈՒԹԻՒՆ

(Շրջաբերական նամակ)

ԸՆԿԵՐՆԵՐ

Ներկայ տարւայ համագումարը կը կայանայ ապրիլի 1ին, Շվէյցարիայի Բէրն քաղաքում։

Այդ առիթով խնդրում ենք բոլոր ուսանողական մարմիններին.

1) Հրաւիրել ժողով և ընտրել պատգամաւորներ (Կանոն. յօդ. 10)

2) Որոշել այն հարցերը, որ ցանկանում են ենթարկել Համագումարի քննութեան։

3) Ուղարկել մեզ՝ Համագումարին դասախօսել ցանկացող ընկերների անունները, ինչպէս և դասախօսութեան վերնագիրը (յօդ. 18)։

4) Ուղարկել վիճակագրական տեղեկութիւններ, «Տեղեկագրի» մէջ մտցնելու համար։

Այդ բոլորը պէտք է հասցնել ոչ ուշ քան մարտի 20ը, որպէս զի կարող լինենք «Օրակարգը» պատրաստել։

Պարտք ենք համարում աւելացնել, որ Համագումարը բանալու համար՝ անհրաժեշտ է ուսանողական մարմինների գոնէ պարզ մեծամասնութեան մասնակցութիւնը։

ԼԻԱԶՕՐ ԿՕՄԻՏԷ

Ռուսմուգ ծխավաճառ Բասմաճեանի քով կը ծախուին Եւրոպ. Հայ Ուսանողական Միութեան հրատարակած Հայաստանի Քարտէզներ։ Օտար քաղաքներէն ստանալու համար 1.20 սանթիմ պէտք է դրկել։

ՅԱԿՈԲ Կ. Հ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ
(Սարաֆ) ՎԱՌՆԱ.

Զանազան ընկերութեանց արժեթղթեր կը գնէ։

12—12

Отговорникъ
Мурадъ-Ераносянъ
Печатница „Взаимность“ Варна